ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

06 մայիսի 2014թ.

Նախագահ՝ Ա. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 9 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ***2013-14թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների պաշտպանության նախապատրաստում:***

Զեկուցող՝ ֆակուլտետի դեկան Ա. Ցուցուլյան

1. ***2013-14թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում: Գրաֆիկի հաստատում:***

Զեկուցող՝ ֆակուլտետի դեկան Ա. Ցուցուլյան

2. ***Ֆակուլտետում որակի կառավարման հանձնաժողովի լիազոր ներկայացուցչի ընտրություն:***

Զեկուցող՝ ֆակուլտետի դեկան Ա. Ցուցուլյան

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ներկաներին ծանոթացրեց 2013-14թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակացույցը, որը նախատեսված է անց կացնել «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունների համար 09.05.-10.05.2014թ., 16.05.-17.05.2014թ. համապատասխանաբար: Ավարտական աշխատանքները արդեն հանձնվել են համապատասխան մասնագիտության ամբիոն: Նա միաժամանակ պահանջեց և հանձնարարեց ֆակուլտետի դեկանատին, ամբիոններին, որ նշված ժամանակահատվածում անհրաժեշտ է աշխատել հստակ

ամփոփիչ քննությունները և ավարտական աշխատանքների պաշտպանությունը կազմակերպված անցկացնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Բ/Մ և ինֆ. ա/վ Մ. Ա. Զաքարյանը, Անտառագիտության ա/վ Ա. Զ. Ալավերդյանը: Նրանք նշեցին, որ ըստ կուրսերի բոլոր ուսանողները նախապաշտպանության են ներկայացրել ավարտական աշխատանքները, կան ավարտական աշխատանքների կարծիքներն ու գրախոսությունները:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկաներին ծանոթացրեց ուսումնական պլանի հիման վրա կազմված 2013-14թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը: Ըստ կուրսերի ներկայացնելով առանձին, նախատեսված բոլոր առարկաների սահմանված ստուգարքի և քննության ժամկետները, նա պարտավորեցրեց, որ անհրաժեշտ է քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Է. Կ. Օսիպովան, Գ. Վ. Գուլակյանը:

ՈՐՈՇՈՒՄ- 1. Հաստատել 2013-14թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակացույցը:

1. Հաստատել 2013-14թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես կավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկաներին ծանոթացրեց, որ մասնաճյուղի որակի կառավարման հանձնաժողովը ֆակուլտետում պետք է ունենա լիազոր ներկայացուցիչ:

Ներկայացվածի վերաբերյալ անցկացվեց քննարկում և ներկաների կողմից առաջադրվեց «Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դասախոս Հայկ Քամալյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՈՒՄ-1. Ֆակուլտետում մասնաճյուղի որակի կառավարման հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչ հաստատել Հայկ Քամալյանին:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ